ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«30» դեկտեմբերի 2022թ. № 1012

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-046-0018-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,13 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՑԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 2387-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ, 60-րդ և 62-րդ կետերով, հաշվի առնելով որ Սպիտակ համայնքի Լուսաղբյուր բնակավայրում գտնվող 06-046-0018-0006 կադաստրային ծածկագրով 0,13 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող շինություններին տրված «գ. Լուսաղբյուր, 138 բնակելի տուն» հասցեն չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներին, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 29112022-06-0013 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի առկա հասցեի փոփոխության հայտի հաստատումը (քաղվածք՝ 06046WWQPTGL) և Հայկ Վազգենի Հակոբյանի (ծնված՝ 10.07.1966թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Լուսաղբյուր բնակավայրում գտնվող 06-046-0018-0006 կադաստրային ծածկագրով 0,13 հեկտար մակերեսով հողամասին, դրա վրա գտնվող 139,2 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը, 6,75 քառակուսի մետր մակերեսով լոգարանին և 47,8 քառակուսի մետր մակերեսով անասնաշենքին տրամադրված «գ. Լուսաղբյուր, 138 բնակելի տուն» հասցեն փոփոխել «Սպիտակ գյուղ Լուսաղբյուր, 1-ին փողոց 1-ին փակուղի, 6 բնակելի տուն» հասցեով (փոստային դասիչը՝ 1812):

2. Սույն որոշման 1-ին կետով նշված հասցեի փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 30
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«30» դեկտեմբերի 2022թ. № 1013

ԿԱՐԻՆԵ ԱՐԱՐԱՏԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 33-րդ կետով, 33.1-րդ կետի «ա» ենթակետով, 34-րդ կետով, 35-րդ կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 2112022-06-0048 վկայականը, Կարինե Արարատի Պողոսյանի համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող՝ «Սպիտակ գյուղ Սարամեջ, 19-րդ փողոց, 27 բնակելի տուն» հասցեում գտնվող, 06-098-0046-0006 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,099943 հեկտար մակերեսով հողամասը կադաստրային արժեքի չափով 92 347,332 ՀՀ դրամ (1քմ 92,40 ՀՀ դրամ), իսկ օրինական ճանաչված 185,36 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը 300 412,8 ՀՀ դրամ (1քմ 1368 ՀՀ դրամ) արժեքներով՝ որպես կառույցն իրականացրած անձի, գնման նախապատվության իրավունքով օտարել Կարինե Արարատի Պողոսյանին (ծնված 12.06.1994 թ.):

2. Կարինե Պողոսյանի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որից ծագող իրավունքը սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

3. Աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալ Գայանե Չոբանյանին և

ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետ Վ.Ապրեսյանին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել համայնքի հողային հաշվեկշռում և ամենամյա գույքագրման փաստաթղթերում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 30
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«30» դեկտեմբերի 2022թ. № 1014

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՂԿԱԲԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-049-0042-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,044 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հաշվի առնելով որ Ծաղկաբեր բնակավայրում գտնվող 06-049-0042-0003 կադաստրային ծածկագրով 0,044 հեկտար մակերեսով հողամասը և դրա վրա գտնվող բակելի տունը ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2022 թվականի նոյեմբերի 14-ի վկայագրի (գրանցված է սեղանամատյանում N 14620) փոխանցվել է Արմեն Ռոբերտի Ղազարյանին, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06049UMPYSJB) և Արմեն Ռոբերտի Ղազարյանի (ծնված՝ 17.01.1968թ.) դիմումը՝ ***որոշում եմ***.

1. Սպիտակ համայնքի Ծաղկաբեր բնակավայրում գտնվող 06-049-0042-0003 կադաստրային ծածկագրով 0,044 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող 34 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը տրամադրել «Սպիտակ գյուղ Ծաղկաբեր, 1-ին փողոց, 6-րդ փակուղի, 6 բնակելի տուն» հասցեն (փոստային դասիչը՝ 1814):
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 30
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«30» դեկտեմբերի 2022թ. № 1015

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՂԿԱԲԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-049-0043-0030 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,116 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հաշվի առնելով որ Ծաղկաբեր բնակավայրում գտնվող 06-049-0043-0030 կադաստրային ծածկագրով 0,116 հեկտար մակերեսով հողամասը ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2022 թվականի նոյեմբերի 14-ի վկայագրի (գրանցված է սեղանամատյանում N 14620) փոխանցվել է Արմեն Ռոբերտի Ղազարյանին, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 0604953VZLQX) և Արմեն Ռոբերտի Ղազարյանի (ծնված՝ 17.01.1968թ.) դիմումը՝ ***որոշում եմ***.

1. Սպիտակ համայնքի Ծաղկաբեր բնակավայրում գտնվող 06-049-0043-0030 կադաստրային ծածկագրով 0,116 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «Սպիտակ գյուղ Ծաղկաբեր, 1-ին փողոց, 8-րդ փակուղի, 12 հողամաս» հասցեն (փոստային դասիչը՝ 1814):
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 30
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«30» դեկտեմբերի 2022թ. № 1016

«ՍՊԻՏԱԿԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՆՆԱ ՄԿՐՏԻՉԻ ԱՋԱՄՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 130-րդ հոդվածի 1.1-րդ մասով, հիմք ընդունելով «Սպիտակի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի վերաբերյալ մրցութային հանձնաժողովի 2022 թվականի դեկտեմբերի 28-ի որոշումը՝ ***որոշում եմ.***

1. 2023 թվականի հունվարի 3-ից «Սպիտակի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Աննա Մկրտիչի Աջամյանին ազատել զբաղեցրած պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2022 թվականի մայիսի 31-ին կնքած թիվ 83 աշխատանքային պայմանագիրը:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ սույն որոշումն ընդունել ի գիտություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ.դեկտեմբերի 30
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«30» դեկտեմբերի 2022թ. № 1017

ԱՆՆԱ ՄԿՐՏԻՉԻ ԱՋԱՄՅԱՆԻՆ «ՍՊԻՏԱԿԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 14-րդ, 84-րդ, 95-րդ հոդվածներով, 130-րդ հոդվածի 1.1-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 1.1-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02–Ն հրամանի հավելվածի 72-րդ կետով, հիմք ընդունելով «Սպիտակի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի վերաբերյալ մրցութային հանձնաժողովի 2022 թվականի դեկտեմբերի 28-ի որոշումը և Աննա Մկրտիչի Աջամյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. 2023 թվականի հունվարի 3-ից Աննա Մկրտիչի Աջամյանին նշանակել «Սպիտակի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:
2. Աշխատավարձը՝ համաձայն հաստատված պաշտոնային դրույքաչափի՝ 180 000 (հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ: Աշխատավարձը համարել փոփոխված Սպիտակ համայնքի ավագանու կողմից պաշտոնային դրույքաչափի փոփոխմանը համապատասխան:
3. Աշխատանքի ու հանգստի ժամանակը և աշխատանքային գործառույթները՝ համաձայն աշխատանքային պայմանագրի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 30
ք.Սպիտակ